Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի մարտի 29 -ի
N 119 -Ա որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ,ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի **/այսուհետ՝ Աշխատակազմ/** քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունը **/այսուհետ՝ Վարչություն/** հանդիսանում է Աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային, Հողային և Քաղաքացիական օրենսգրքերով, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Տարածքային կառավարման մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Քաղաքաշինության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Համատիրության մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին», «Գույքի նկատմամբ պետական գրանցման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Փակ բաժնետիրական ընկերությունների մասին» «Տեղական ինքնակառավարման մասին» և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ՀՀ Կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով, Հայաստանի

Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի /**այսուհետ՝ Մարզպետ**/ որոշումներով, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի /**այսուհետ՝ Գլխավոր քարտուղար**/ հրամաններով, Աշխատակազմի ու սույն կանոնադրություններով և այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում /փոփոխում/ է Մարզպետը:

4. Վարչության պետը և աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

5. Վարչությունն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրով: Վարչության տարեկան աշխատանքային ծրագիրը հաստատում է Մարզպետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Վարչությունն իր մեջ ներառում է մեկ ներքին կառուցվածքային միավոր՝ հողաշինության բաժինը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. **Վարչությունը քաղաքաշինության և ճարտարապետաշինարարական ոլորտում՝**

1) ապահովում է մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի, մշակութային և սպորտային կազմակերպությունների կառուցումը, պահպանումն ու շահագործումը, ինչպես նաև կազմակերպում է մարզային ենթակայության առողջապահական, սոցիալական պաշտպանության հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումն ու շահագործումը.

2) լիազորված մարմնի միջոցով, սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում կառավարություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի /**այսուհետ՝ Մարզ**/ համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ.

3) հանդես է գալիս Մարզի համայնքների միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախաձեռնությամբ.

4) ապահովում է Մարզի համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները, համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում մասնակցում է Մարզի համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ եզրակացությունների կազմման գործընթացին.

5) ապահովում է Մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմումը և ներկայացնում է քաղաքաշինության ոլորտի պետական մարմին.

6) Մարզի տարածքում քաղաքաշինության, հողաշինության և հողօգտագործման բնագավառներում տեղական ինքնակառավարման

մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացումը.

7) ոլորտին առընչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացնում է դիտողություններ և առաջարկություններ.

8) ըստ անհրաժեշտության, ներկայացնում է զեկուցումներ՝ քաղաքաշինության ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին.

9) իրականացնում է Մարզի համայնքների ղեկավարներից ստացված շինարարության թույլտվությունների օրինականության ստուգում ընտրանքային կարգով և հաշվառում.

10) իրականացնում է միջնաժամկետ ծախսային ծրագրի մշակում.

11) իրականացնում է հիմնանորոգման աշխատանքների ընթացքի վերահսկումը.

12) աջակցում է Մարզի համայքների կողմից գերեզմանատների գործունեության հետ կապված աշխատանքներին.

13) մասնակցում է Մարզի տարածքում իրականացվող պետական ծրագրերով ավարտական շինարարական աշխատանքների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին.

14) իրականացնում է պատվիրատուի գործառույթներ քաղաքաշինության բնագավառում ՀՀ պետական բյուջեից կատարված հատկացումների գծով.

15) հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում կազմկերպում է քաղաքաշինական գործունեության նպատակով համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների համաձայնեցումը և օրենսդրությամբ նախատեսված դեպքերում առաջարկությունների վերաբերյալ եզրակացություններ է ներկայացնում պետական կառավարման համապատասխան լիազոր մարմիններին.

16) Մարզի համայնքներից ստանում է Մարզի տարածքում քաղաքաշինական հատուկ կարգավորման գոտիներում կառուցապատման վերաբերյալ առաջարկություններ, տալիս է դրանց վերաբերյալ եզրակացություններ, սահմանված դեպքերում ապահովում է լիազոր մամնների հետ համաձայնեցման գործառույթներ:

8" Վարչությունը հողաշինության և հողօգտագործման ոլորտում՝

1) մասնակցում է Մարզի հողային քաղաքականության, հողային ռեսուրսների կառավարման, հողօգտագործման արդյունավետության բարձրացման սկզբունքների մշակմանը և հողային հարաբերությունների կարգավորմանը.

2) համակարգում է հողերի օգտագործման /գոտիավորման/ սխեմաների, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (բնակավայրերի գլխավոր հատակագծերի, մանրամասն հատակագծային փաստաթղթեր) կազմման աշխատանքները.

3) մասնակցում է հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի կազմման, հողերի միավորման, բաժանման նախագծերի մշակման աշխատանքներին.

4) մասնակցում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբաշխման նպատակային ծրագրերի մշակմանը.

5) աջակցում և օժանդակում է հողաշինարարության գծով քարտեզագրման, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական և այլ հետազոտական աշխատանքների իրականացմանը.

6) կազմում է մարզի հողային հաշվեկշիռը և սահմանված կարգով ներկայացնում հաստատման.

7) իրականացնում է մարզի համայնքների վարչական տարածքներում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողերից օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման և կառուցապատման իրավունքով տրամադրման վերաբերյալ համայնքների կողմից ներկայացված համապատասխան գործերի քննարկում, եզրակացության կազմում և ներկայացնում Մարզպետի համաձայնեցմանը.

8) համակարգում է հողային հարաբերությունների բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրման գործընթացը.

9) կազմակերպում է գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու Հայաստանի Հանրապետության Մարզպետի կողմից ստեղծված մարզային հանձնաժողովի գործունեությունը /հանձնաժողովի անդամներին հողաշինարական գործերի նախնական ծանոթացում, հանձնաժողովի նիստի օրակարգի նախագծի կազմում, քննարկման արդյունքների ամփոփում և համապատասխան արձանագրությունների և եզրակացությունների կազմում/.

10) ապահովում է հողաշինությանը վերաբերվող իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի (հրահանգներ, մեթոդական ցուցումներ, հանձնարարականներ) մշակումը ու ներդրումը:

9. Վարչությունը տրանսպորտի և ճանապարհաշինության ոլորտում՝

1) իրականացնում է մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման, շահագործման, ամառային և ձմեռային պահպանության աշխատանքների գնման նպատակով փաթեթների պատրաստում, շահագործման շրջանակներում կատարած աշխատանքների ընթացիկ դիտարկումներ և ընդունում.

2) համակարգում և հսկում է Մարզի տարածքում ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, վերակառուցման ու նորոգման, դրանց տեխնիկական մակարդակի ու անվտանգ երթևեկության ապահովման աշխատանքները.

3) ուսումնասիրում է իր սպասարկած տարածքում ճանապարհային ցանցի զարգացման առաջնահերթ կատարվելիք աշխատանքների պահանջարկը և առաջարկություններ ներկայացնում Մարզպետին՝ ապահովելով օպերատիվ և արդյունավետ գործունեություն.

4) կատարում է ճանապարհաշինության աշխատանքների իրականացման ուղղությամբ պետական բյուջեից ֆինանսավորվող աշխատանքների պատվիրատուի գործառույթներ.

5) մասնակցում է Մարզի ավտոմոբիլային ճանապարհների, ճանապարհային կառույցների, ավարտված շինարարական օբյեկտների ընդունող հանձնաժողովի աշխատանքներին.

6) ապահովում է Մարզի մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, նրանց վրա գտնվող արհեստական և ինժեներական կառուցվածքների անվտագության ապահովման ու երթևեկության կահավորանքի տարրերի, շինարարության, նորոգման, պահպանության և շահագործման, ճանապարհների մաքրության ու խնամքի աշխատանքեր.

7) աջակցում է միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներին.

8) իրականացնում է մարզային նշանակության ավտոճանապարհների վիճակի ուսումնասիրություն, դասակարգում և ըստ մակարդակի գնահատում.

9) ապահովում է մարզային նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման ուսումնասիրություններ, անհրաժեշտության դեպքում ներկայացնում է առաջարկություններ տեղադրման թույլտվությունների ուղղությամբ.

10) մշակում է Մարզի ճանապարհաշինության բնագավառի միջնաժամկետ ծախսային ծրագրերը, կազմում է բյուջետային հայտերը.

11) վարչությունը կառավարության կողմից սահմանված կարգով համաձայնություն է տալիս մարզի տարածքում գործող միջմարզային, ներմարզային, ինչպես նաև ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցին.

12) կազմում է ներմարզային երթուղիների չվացուցակները և երթուղիների շարժման ուղիները և ներկայացնում է լիազոր մարմին:

10. Վարչությունը բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության ոլորտում՝

1) ապահովում է Մարզի բնակարանային և ենթակառուցվածքների գործունեությանը վերաբերվող աշխատանքները.

2) աջակցում է պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման և պահպանման /օգտագործման/ ուղղությամբ կատարվող աշխատանքների իրականացմանը, ապահովում է անշարժ գույքի օտարման, վարձակալության, և պայմանագրերից բխող իրավունքների պետական գրանցման աշխատանքները.

3) ըստ անհրաժեշտության կազմում և ներկայացնում է համապատասխան տեղեկություններ անշարժ գույքի, /շենքեր, շինություններ, հողեր, հողատեսքեր և այլն/ և ենթակառուցվածքների /ջրամատակարարում և ջրահեռացում, գազիֆիկացում, էլեկտրիֆիկացում, բնակարանային տնտեսություն, համաուիրություններ, կապ և այլն/ վերաբերյալ.

4) աջակցում է Մարզի ենթակառուցվածքների /ջրամատակարարում, ջրահեռացում, գազամատակարարում, էլ. էներգիայի մատակարարում/ գործունեության ոլորտի և մարզային ենթակայության ինքնուրույն ջրամատակարարում և ջրահեռացում իրականացնող համայնքների և այլ կոմունալ ծառայությունների աշխատանքներին.
5) աջակցում է Մարզի տարածքում բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության ոլորտի տնտեսական ծրագրերի կազմման աշխատանքների.
6) Մարզի բնակչությանը էլեկտրաէներգիայով, գազով, ջրով և հեռախոսակապով ապահովելու նպատակով համագործակցում է համապատասխան կազմակերպությունների հետ և անհրաժեշտության դեպքում ներկայացնում միջնորդություններ"
7) իրականացնում է Մարզի համայնքների և մարզային ենթակայության կազմակերպությունների անշարժ գույքի /վարձակալություն, օտարում, դուրս գրում և այլն/ և ենթակառուցվածքների գործունեության հետ կապված գործարքներ:

11. Վարչության այլ գործառույթները՝

1) իրականացնում է այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստացված, Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի նախապատրաստում.
2) սահմանված կարգով ուսումնասիրում, քննարկում և պատասխանում է վերադասից, համայնքներից, քաղաքացիներից, կազմակերպություններից ստացված հանձնարարականներին և դիմումներին.
3) ապահովում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր նախապատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ մշակելը.
4) կազմում, նախապատրաստում և ներկայացնում է առաջարկություններ, տեղեկանքներ, միջնորդագրեր, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
5) վարչությունը քաղաքացիական պաշտպանության հարցերում համակարգում է ինժեներական, տրանսպորտի և ենթակառուցվածքների ծառայությունների ոլորտները.
6) վարչությունը կազմում է տվյալ տարվա տարեկան աշխատանքային պլանը և դրա հիման վրա յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում է հաշվետվություններ.
7) լիազորությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում Մարզի տարածքում քաղաքաշինության, կապիտալ շինարարության, հողաշինության, հողօգտագործման, բնակարանային կոմունալ տնտեսության, ենթակառուցվածքների ոլորտներում կառուցապատման գործընթացի իրականացման և համակարգման ուղղությամբ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,

ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

12. Վարչության աշխատանքը համակարգում է Մարզպետը կամ նրա որոշմամբ Մարզպետի տեղակալը:

13. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Մարզպետի կողմից հաստատված Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով՝ Վարչության պետի, բաժնի պետի և համապատասխան մասնագետների միջոցով:

14. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

15. Վարչության պետն անմիջական հաշվետու է Մարզպետին:

16. Մարզպետը Վարչության պետի անմիջական ղեկավարն է:

17. Վարչության պետի, Բաժնի պետի և աշխատողի /աշխատողների/ ենթակա և հաշվետու պաշտոնները, փոխարինող պաշտոնների անվանումները, աշխատանքների բնույթի, իրավունքների և պարտականությունների, կրթության, որակավորման աստիճանի, մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, անհրաժեշտ կոմպետենցիաների, աշխատանքների կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից գբաղեցրած քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

29.03.2023

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱՏԻՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ